

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Ք Ե Շ Ե Ն Յ ՈՒ

ԳԱՐԵԳՐԻ, ՀՈՎՍԵՓՅԱՆ. Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության. Հատոր Ա, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Մ. Ղազարյան, Երևան, 1983:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը հրատարակության է պատրաստել անվանի հայագետ, մշակութային խոշոր գործիչ Գարեգին Հովսեփյանի երկերի երկհատորյակը, որ լույս է տեսնում «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության» Արդեն լույս է ածվել Երկհատորյակի առաջին հատորը և քանի որ ռուսական կազմված է ժամանակագրական սկզբունքով, նրանում տեղ են գտել հեղինակի ստեղծագործության սկզբնական շրջանի նյութերը: Առաջին իսկ ծանոթությունն այս հատորի հետ ակնհայտ է դարձնում անվանի գիտնականի հետազոտությունների լայն շրջանակը: Հոգվածների հիմնական մասը վերաբերում է հայ միջնադարին, որի հմուտ գիտակն ու առաջին ուսումնասիրողներից մեկն էր Հովսեփյանը: Թվով լի չեն այն հոգվածները, որոնք վերաբերում են ուշ շրջանի հայ արվեստագետներին: Դրանցից են Եղիշ Խաղեսոյանին նվիրված և նկարիչ Սերայիյանի ցուցահանդեսի մասին հոգվածները: Իրենց բնույթով հատորում ընդգրկված մյուս հոգվածներից առանձնանում են նաև «Մի պոռտրետ Երևանում» և «Մայր աթոռի մատենադարանը» նյութերը: Սրանք հիշեցնում են հասարակական լայն շահերով արդող, մեղանում մտավոր առաջընթացի համար պայքարող աղանիվ քաղաքացու՝ Գարեգին Հովսեփյանի հոգսերի ու դործերի մասին, ամբողջական դարձնում մշակութային եռանդուն գործչի նկարագիրը:

Միջնադարյան հայ արվեստին վերաբերող նյութերը նույնպես բազմազան են իրենց թեմաներով: Բացի հայ մանրանկարչության մի շարք կնճոռտ հարցերը լուսաբանող հոգվածներից, հատորում տեղ են գտել նաև կիրառա-

կան արվեստի շատ հյուղերին՝ գրամագիտությանը, ոսկերչական արվեստին, ասեղնագործությանը, փայտարվեստին նվիրված նյութեր: Կարևորն ու ընդհանուրն այս բոլոր հոգվածներում ձեռք է բերում Հովսեփյանի արվեստում, առավել ևս վաղ անցյալի արվեստում, չկան մանր ու մեծ, կարևոր ու անկարևոր նյութեր: Առաջին հայացքից փոքր, աննշան թվացող մի դրվագ, մի նմուշ կարող է լույս սփռել մի ողջ ժամանակաշրջանի նյութական մշակույթի պատմության վրա, պարզաբանել ժողովուրդների միջև եղած սլառամշակութային առնչությունների շուրջը: Հարցերը: Այդ իմաստով ուղագրավ են նրա «Հնո իշյան նշխարներ» և «Նախնայաց հիշատակներ» հոգվածները: Մյուս սկզբունքը, որով առաջնորդվում էր Գարեգին Հովսեփյանը կիրառական արվեստն ուսումնասիրելիս, այն է, որ մեծ նշանակություն էր տալիս իր իսկ տեղեկությունով ասած՝ «երկրորդ տեսակ» աղբյուրներին: Միտնականը քաջ գիտակցում էր, որ կիրառական արվեստի, մասնավորապես հայ կիրառական արվեստի ուսումնասիրության գործում, երբ նյութական նմուշները անբարենպաստ պայմանների պատճառով հիմնականում ոչնչացել են ու մնացել են միայն գրավոր հիշատակություններ, արժեքավոր են նույնիսկ ամենահեռավոր վկայությունները:

Հայ մանրանկարչությանը վերաբերող հոգվածներում Գարեգին Հովսեփյանը իրեն բնորոշ բացառիկ բարեխղճությամբ ու բանիմացությամբ պարզաբանում է այն սոցիալ-պատմական, մշակութային հիմքերը, որոնք պայմանավորում են հայ մանրանկարչական զարգացման առանձնահատկությունները: Այստեղ էլ զգու-

շավոր է գիտնականն իր ընդհանրացումների մեջ, առավել ևս, երբ խոսք է գնում խորհրդանշական համակարգի տարրերի մասին: Ուզում ենք առանձնացնել այդ շարքի հոգվածներից վերջինը, որը նաև հատորի վերջին հոգվածն է: Այն կոչվում է «Կոստանդին Ա կաթողիկոս որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր»: Հոգվածն իր գիտական ձևի մեջ մի յուրօրինակ հիմն է կրիկյան մշակույթի երկու մեծ երախտավորներին՝ Խորոս Ռոսլինին և Կոստանդին կաթողիկոսին: Նշեցնելու այդ գործչի նկատմամբ նման համակարանը, ինչ խոսք, գիտնականը զրուցում է ամենից առաջ նրա՝ գիտության ու արվեստի ջերմ հովանավոր լինելու պատճառով: Հոգվածի վերջին գրում է. «Կոստանդին կաթողիկոսի Բնավորության և ուղղության հատկություններից մեկն է յուր շուրջը հավաքել արժանավոր և գիտնական վարդապետների, ինչպես Առավոտ պատրիարքն էր...», ապա արևելյան նշանավոր վարդապետներից՝ Վարդան պատմիչը և Հովհաննես Գառնեցին և լավագույն հարաբերություններ ստանալով առհասարակ Արևելքի հայ վանքերի հետ...» (էջ 316): Հոգվածում ժամանակագրական կարգով քննության են առնված այն ձեռագրերը, սրտք Կոստանդին կաթողիկոսի հովանավորությանը ծաղկել է Ռոսլինը՝ միջնադարյան գրքարվեստի այդ հանձարեղ ներկայացուցիչը:

Հոստանդինի գրքում կա մի հոգված, որն իր բնույթով ավելի բանասիրությանն է առնչվում, քան արվեստաբանությանը, սակայն արժե հիշել նաև այդ գործը: Այն կոչվում է «Հայոց գրի գլխավոր տեսակները»: Հեղինակը տարբերակում է հայոց գրի բոլորգիծ, երկաթագիր, նոսրգիր տեսակները՝ յուրաքանչյուրը ստորաբաժանումներով և անցման շրջաններով: Նա առանձնացնում է նաև զարդագիրը, նրա մասին մասնավորապես նշելով. «Ջարդագիրն ընդհանրապես գրի զարգացման ավելի բարձր շրջանին է պատկանում, նա շքեղության պահանջի արդյունք է և ոչ իսկական կարիքի: Հնագույն արձանագրությունների և ձեռագիրների մեջ զարդագրեր չեն գործադրվում: Գրի այդ տեսակը հայոց մեջ սկսվել է հավանորեն ոչ ավելի վաղ, քան Թ՝ զարդ մնացորդներ ունինք ժ և ԺԱ դարերից, իսկ զարդացման բարձր շրջանը ժԲ դարու վերջերից մինչև ԺԴ-ի սկիզբն է: Այդ շրջաններում հայ մանրանկարչների թուղթներին, կենդանիներին,

րից, մարդուց, բուսական և երկրաչափական զարդարանքներից սքանչելի, գեղանկար զարդեր կամ ծաղկագրեր են կազմում, որ իրենց նրբությամբ, ճաշակով և գեղեցկությամբ մրցել կարող են հարևան, բարձր քաղաքակրթությամբ ազգերի հետ» (էջ 118—119):

Մի քանի խոսք Գարեգին Հովսեփյանի տերմինաբանական աշխատանքի մասին, որը նրկատելի է նրա երկերում ընդհանրապես, ինչպես նաև Ա հատորում:

Հայտնի ճշմարտություն է, որ բոլոր նրանք, ովքեր սկիզբ են դնում գիտության, արվեստի որևէ հյուսիս ուսումնասիրությանը, կանգնում են լուրջ և դժվարին, նաև ուղղակի անխուսափելի մի խնդրի առջև՝ ստեղծել կամ առնվազն մշակել տվյալ բնագավառի տերմինալին բառապաշարը: Գարեգին Հովսեփյանին, ինչպես նաև իր ժամանակակից մյուս խոշոր արվեստաբաններին՝ Ակիսյանին, Չոպանյանին, Լեվոնյանին, Սաղրջյանին վիճակված էր սկիզբ դնել հայ արվեստի, մասնավորապես հայ կիրառական արվեստի ուսումնասիրությանը, գուշահատար մշակելով արվեստի հայերեն տերմիններ: Դա նշանակում էր կիրառել մինչև այդ եղած, բայց արդեն մոռացության տրված բառեր, վերափոխություններ զրանք, երբեմն էլ իարգմանել, պատճենել այն տերմինները, որոնք կային եվրոպական այլ լեզուներում:

Այն թե ինչու Գարեգին Հովսեփյանի գրքում հաճախ են գործածվում օտար և հայերեն նորաստեղծ տերմինը՝ զուգահեռաբար: Տարմինաշինարար գիտնականի նպատակը մեկն է՝ ընդլայնել այդ տերմինների գործածության ոլորտը, արմատավորել դրանց հայերեն տարբերակները:

Այդ տերմինների հիմնական մասը արվեստնվերապահորեն ընդունվել ու գործածվում է կիրառական արվեստում: Սակայն կան և այնպիսիները, որ մեր օրերում փոխարինվել են նորերով: Որինակ «մեանդրը» իր տեղը փոխել է ոլորանախշ բառին: «Մանր արվեստներ» տերմինը ավելի ու ավելի սակավ է գործածվում, դրա փոխարեն զգտագործվում է կիրառական արվեստ տերմինը: Հասակոտոր բառը, որ նշանակում է հատված, պատասխան, գիտնականը գործածել է ֆրագմենտ օտար բառի փոխարեն: Այժմ այդ նույն իմաստով օգտագործվում է զրվագ բառը, թեև, մեր կարծիքով իբրև տերմին հասակոտորը դերադա-

անելի է, քանի որ զրկվազ բառը արդի հայերենում բաղադրական է: Այսպես, ժամանակակից հայերենի բացատրական բառարանում գրողական ունի երեք իմաստ, իսկ է. Աղալանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բերված է 7 իմաստ: Մինչդեռ հատկապես բացատրվում է սերմինն անհրաժեշտ մեծիմաստության պայմանին: Նույնը կարելի է ասել Հովսեփյանի գործերում հաճախ հանդիպող նշանակ տերմինի մասին, որը նա կիրառում է սիմվոլ բառի փոխարեն:

Այսպիսով, լույս ս հասած ժողովածուն մեկ անգամ ևս վկայում է, որ Գարեգին Հովսեփյանի ծառայությունը հայ արվեստի ուսումնասիրության մեջ ընդհանրապես, նրա տերմինալիքն ընդհանրապես ստեղծման գործում մասնավորապես, անուրանալի է:

Գիտական այն մեծ ժողովածուները, որ բողբ է Գարեգին Հովսեփյանը, ինչ խոսք, հնարավոր չի, բնորոշել երկու հատորում: Գրախոսվող ժողովածուում տեղ են գտել գիտականի արվեստաբանական հոգվածները: Սակայն հայտնի է, որ Գ. Հովսեփյանի երկերում ավելի հաճախ պատմա-ազգագրական, բանասիրական նյութը միահյուսված է արվեստաբանականին: Այդ իսկ պատճառով ժողովածուն կազմողը հավանություն չի ունեցել երկ-հատորյակում ամփոփել գիտականի բոլոր այն երկերը, որոնք նվիրված են հայ մշակույթի պատմությանն ընդհանրապես, ուստի

անհրաժեշտություն է դարձել մուս բնագավառներին առնչվող նրա աշխատությունների հրատարակությունը: Այդ դեպքում միայն հր-նարավոր կլինի ասել, որ հայ մշակույթի մեծ երախտավորներից մեկի՝ Գ. Հովսեփյանի երկերը, որոնք ցայսօր սփռված են հայրենական ու արտասահմանյան բազմաթիվ հանդեսներում, ամսագրերում, մեծ ու փոքր բաղաժամի պրակներում, ի մի են բերվել, մատչելի դարձել հայ մշակույթի հարցերով զբաղվողների համար:

Առայժմ ընթերցողի սեղանին է Գարեգին Հովսեփյանի երկերի երկհատորյակի Ա հատորը, որ բնորոշված ուսումնասիրությունները արուստ նյութ են պարունակում հայ մշակույթի պատմությանը զբաղվողների համար: Նրանում կան մանրանկարչական, գեղանկարչական գործերի, հայ կիրառական արվեստի նուշների բաղաժամի վերատպություններ, որոնք ժամանակին հեղինակը ներառել է իր ուսումնասիրություններում: Պահաս կարևոր չէ այն հանգամանքը, որ այդ հարուստ նյութը մատուցվում է ամբողջական տեսքով, նաև առավել մատչելի է ուղղագրական տեսակետից: Ահա առավելություններ, որ ունի Գարեգին Հովսեփյանի երկերի ներկա հրատարակությունը:

Մ. Խ. ԳՅՈՒՆԱՋԱՐՅԱՆ

Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1985, 328 էջ

Մեր գրական լեզվի երկու տարբերակներին նվիրված գիտադրական-տիպարական առաջին ամբողջական ուսումնասիրությունն է, որում քանակական ու որակական մեթոդների կիրառմամբ քննվում են արդի հայերենի երկու գրական տարբերակների կառուցվածքային ընդհանրություններն ու առանձնահատկությունները և նշումում արդի հայերենի դիրքը աշխարհի լեզուների ընդհանրական տիպարական գաղափարում: Առաջ անցնելով ասենք, որ սույն ուսումնասիրությամբ ևս հաստատվում է այն տեսակետը, որ գրական արևելահայերենն ու արևմտահայերենը ոչ թե առանձին լեզուներ են, այլ մեկ ազգային լեզվի՝ արդի հայերենի երկու տարբերակներ: Այդ եզրակացությունը արվել է և՛ արևելահայերենի, և՛ արևմտահայերենի համակարգային երևույթների, էական հատկանիշների հիման վրա՝ յուրաքանչյուր իրավություն քննելով ըստ հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուս-

ական մակարդակների և քննությունը տանելով արտահայտության պլանից դեպի բովանդակության պլանը: Բոլոր դեպքերում որպես համեմատության եղբ քննվել են երկու գրականների միջև եղած տարբերությունները: Իսկ զա հնարավորություն է քննենել պարզելու երկու գրականների մերձավորության աստիճանը և աշխարհաբար լեզվի զարգացման ընդհանուր ուղղվածությունը: Ա. Սարգսյանն ուսումնասիրությունը կատարել է միայն գրական տարբերակների նյութի հիման վրա՝ առաջադիվ թողնելով քննարկման ծիրի մեջ առնելու նաև խոսակցական գրանցումները: Աույն հետադատության համար նախապես հեղինակի կողմից ուսումնասիրվել են կիսրոսի Մեյրոնյան կրթական հաստատության ուսուցչական կազմի ու սովորողների գրական կանոնական խոսքը, կիսրահայ ուղիղումների արտահայտական օրինակալիությունները և Մերձավոր տ. Միջին Արևելքի հայաշատ գաղութներ գրական